

ԵՒԱԳՐ

մարմին եւ շունչ ծշմարտ եւ ոչ առ ա-
 չօր. զի այնպէս եկն կատարել (է--է.
 կատարեալ) փրկել զմարդն, եւ ծշմար-
 տիւ շարժարեցաւ եւ թաղեցաւ, եւ յառուր
 երրորդի յարեաւ եւ յերկինս վերացաւ,
 եւ նստաւ ընդ աջմէ չօր. եւ զալոց է
 դատել զկենդանիս եւ զմեռեալս:

Դարձեալ նզովեմք զԱրիոս եւ
 զամենայն ներեսիութիւն նոցա՝ որ ասնն
 արարած զՈրդին Աստուծոյ:

Այլ վասն կատարման նաւատոյ
 նաւատամբ ի մի մկրտութիւն ապաշխա-
 րութեան, ի մի յեկեղեցի, յարութիւն
 մարմնոյ, յարքայութիւն երկնից եւ յաւ-
 րտենական դատաստանն:

Այլ վասն Աստուծոյ խոստովա-
 նիմք ի Հայր եւ Որդի եւ ի Հոգին սուրբ,
 մի աստուածութիւն սրբոյ Երրորդու-
 թեան: Զի Հոգի Աստուած է քայց ի
 կամաց նորա երեւեցաւ, խօսեցաւ ընդ
 արդարսն իւր, ընդ Ադամայ եւ ընդ
 Նոյի, ընդ Աբրահամու... եւ ընդ այլ
 սուրբսն ամենեւին:

Այլ որ միանգամ գիրք ասնն աչս
 Տեառն կամ աղանջս կամ այնպիսի ինչ
 միք ի ծշմարտութիւն նաւատացեալ եմք
 զի անհաս է եւ անիմաստ. եւ զամենայն
 մարդ ըստ պատկերի կերպարանաց իւ-
 րոց ստեղծեալ է. այլ որպէս ինչ զինչ
 իցէ, ի Տէր թողուր գիտել...:

ՍԱՀԱԳ

Եթէ ինքն պարտ էր շարժարմաց, այլ
 վասն մեր էառ յամսն զշարժարմս,
 իաշեցաւ եւ թաղեցաւ եւ յերիւ առուր
 յարեաւ եւ յերկինս նամբարձաւ եւ ընդ
 աջմէ չօր նստաւ, եւ զալոց է դատել
 զկենդանիս եւ զմեռեալս:

Այլ առ կատարման նաւատոյ
 նաւատամբ ի մի մկրտութիւն ապաշխա-
 րութեան, եւ ի մի կաթողիկէ եկեղեցի
 եւ ի յարութիւն մեռելոց եւ յարքայու-
 թիւն երկնից եւ ի դատաստանսն յաւ-
 րտենականս:

Եւ Աստուած խոստովանիմք զՀայր
 եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին, մի աս-
 տուածութիւն սուրբ Երրորդութեան: Զի
 Հոգի է Աստուած եւ կամք երեւեալ,
 խօսեալ օրինօք եւ մարգարէիւք եւ ա-
 ռարելովք:

Հաւատամք ծշմարտին անգիտու-
 թեամբ եւ անհասութեամբ զի ամենայն
 մարդ ըստ պատկերի Աստուծոյ. այլ թէ
 որպէս կամ գիտնո՞ր, Աստուծոյ է գիտել...:

Ուստի ասկէ յայտնի բան չի կրնար բլլալ որ Սահակ կամ
 անոր ատենագրպիրն՝ ուրիշ բան ըրած չէ վերոյիշեալ կտորին մէջ
 բայց եթէ Աւագրի խօսքերը համառօտելով առնուլ՝ ան հա-
 տուածին հետ ի միասին՝ որն որ Մարգարէականաց մոլորու-
 թեանք կը հայի, որուն վրայ, Աւագրի ատեն, վանականաց մէջ
 մեծաւ ջերմութեամբ կը վիճուէր:

Եթէ առաջիկայ հանգանակիս կերպութիւնը ճշդ դարէն
 վեր չեղեր, արդեօք Ա-Պոլսոյ ըսուած հանգանակը կը գործածէին
 Հայք անկէ առջեւ դարերու մէջ:

Ար կարծենք որ կրնայ համարձակ ըսուիլ թէ աս Ա-Պոլսի
 հանգանակը Հայաստանի մէջ երբեք հանդիսապէս չգործածուե-
 ցաւ. եւ ոչ ալ ունինք հինքէն անոր հայերէն թարգմանութիւնը:
 Եթէ Մսեր Նոյն հանգանակն իր յառաջաբանականներուն մէջ
 յառաջ կը բերէ, անիկայ Հարց Մխիթարեանց թարգմանութիւնն
 է: Հաղիւ քանի մը յիշողութիւններէն գիտեմք որ սոյն հանգա-
 նակը ճշդ դարուն վերջերը մերիններուն անձանօթ չէր: